# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1 (6)

## ՀՀ կրթության տեսչական մարմնի խորհրդի նիստ

ք.Երևան

11 հունվարի 2019թ.

Ժամը 18$^{00}$

**Մասնակիցներ**

Ա. Հարությունյան - ՀՀ կրթության և գիտության նախարար (խորհրդի նախագահ)

Ա. Բաբայան - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

Ա. Ասատրյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ս. Ալոյան - «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ

Ա. Բախշյան - «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական

Թ. Ավակյան - «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն

**Բացակայում էին**

Հ. Այվազյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

**Ներկա էին**

Ալ.Շագաֆյան - ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար

Ա. Գևորգյան - Կառավարման խորհրդի քարտուղար

**Հրավիրվածներ**

Տ. Հակոբյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

Զ.Միքայելյան - ՀՀ ԿՏՄ ռիսկերի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության պետ

# ՕՐԱԿԱՐԳ

**Հարց 1.** ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի հաշվետվության քննարկում:

**Հարց 2.** ՀՀ կրթության տեսչական մարմնի 2019 թվականի տարեկան գործունեության ծրագրերի քննարկում:

**Ընթացիկ հարցեր:**

Նիստը վարում էր կառավարման խորհրդի նախագահ **Ա. Հարությունյանը**:

**ՀՀ ԿԳ նախարար Ա. Հարությունյանը** խորհրդի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգը, որում ընդգրկված էր 2 հարց՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի հաշվետվությունը և ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝մարմին) 2019 թվականի տարեկան գործունեության և իրականացվող ստուգումների տարեկան ծրագրերը:

**Խորհրդի անդամները օրակարգը հաստատեցին ՄԻԱՁԱՅՆ:**

**Ա. Բախշյանին** հետաքրքրեց նախորդ արձանագրությունը հաստատելո՞ւ են, թե՞ ոչ:

**Ալ. Շագաֆյանն** ասաց, որ անցած տարվա վերջից էլեկտրոնային փոստով այն շրջանառվել է և խորհրդի անդամներին առաջարկվել հետադարձ կապով տեղեկացնել հնարավոր առարկությունների և առաջարկությունների մասին:

**Ա. Բախշյանն** ասաց,որ ինքն արձագանքել է:

**Ալ. Շագաֆյանն** նշեց, որ տիկին Բախշյանի բոլոր նկատառումները ներառվել են արձանագրության մեջ:

Նախագահողն առաջարկեց մարմնի ղեկավար **Ալ. Շագաֆյանին** ներկայացնել օրակարգային հարցերը:

**Ալ. Շագաֆյանն** օրակարգի առաջին հարցով ներկայացրեց հաշվետվությունը, ասելով, որ համաձայն նախորդ նիստի պայմանավորվածության, կզեկուցի գործընկեր կազմակերպությունների հետ մարմնի համագործակցության մասին: Նշվեց, որ տարբեր առիթներով տեղեկացվել է **«Դասավանդիր Հայաստան» (Teach for Armenia)** կազմակերպության, «Դասարան» կրթական ծրագրի հիմնադրի և ՀՀ կրթության նախարարության կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի հետ համագործակցության

մասին, որի մասին նշված է նաև հաշվետվության մեջ: Մարմնի նախաձեռնությամբ 2018 թվականի ստուգումների և ուսումնասիրությունների գործընթացում որպես անկախ փորձագետներ ներգրավված են եղել հասարակական կազմակերպությունների գործընկերները՝ նպատակով, որ գնահատեն մարմնի կողմից իրականացվող վերահսկողության գործընթացը և արդյունքում հետադարձ կապի միջոցով տրամադրվի կարծիք հետագայում ՏՄ աշխատանքները բարելավելու համար: Ասվեց նաև, որ ի ուրախություն ստացված արձագանքների, մարմնի ծառայողները իրենց լիազորությունները իրականացրել են բարեխիղճ և փոխադարձ համագործակցային, բայց միևնույն ժամանակ ակնհայտ է, որ մարմնի աշխատանքների տեսակարար կշռում շարունակվում է էական մնալ փաստաթղթային մասը՝ հատկապես որակի փաստաթղթային ուսումնասիրության գործընթացում: Նշվեց, որ այն հաշվի է առնվել 2019թ. աշխատանքային ծրագիրը կազմելիս, մասնավորապես ուսումնական հաստատությունների կառավարման հատվածի վերահսկման գործընթացը կիրականացվի նաև ստուգաթերթերով՝«Դասարան» կրթական ծրագրի հիմնադրի հետ: Կստեղծվի նաև նոր գործիքակազմ, որի միջոցով հասկանալի կլինի գնահատել ստուգաթերթերով ստացված տվյալների և ծնողների ու սովորողների պատկերացումների համապատասխանությունը:

**Ս. Ալոյանը** շարունակեց միտքը, ասելով, որ տվյալները, որոնք անհրաժեշտ են տեսչական մարմնին, անձնական տվյալներ չեն պարունակում և վերաբերում են դասարանում աշակերտների թվաքանակին:

**Ալ. Շագաֆյանը** օրակարգի երկրորդ հարցով ներկայացրեց մարմնի 2019 թվականի տարեկան գործունեության ծրագրի նախագիծը:

Ասվեց, որ 2019թ. աշխատանքային ծրագրի մյուս կարևոր միջամտությունը՝ տեսչական մարմնի աշխատանքը ավելի որոշակի դարձնելն է, մասնավորապես կրթության վերահսկողության բնագավառը կարգավորող օրենք ունենալը, նշելով, որ ցանկալի կլիներ այդ նախագիծը դրվեր շրջանառության մեջ մինչև 2019թ.ավարտը, որպեսզի իրավական դաշտը ավելի հստակ և արդյունավետ լինի, իսկ համակարգը՝ հաշվետու:

Առաջարկվեց մինչ կրթության բնագավառը կարգավորող օրենքի նախագիծը շրջանառության մեջ դնելը մշակել հայեցակարգ, ռազմավարություն կամ նախնական որոշում, որին կհաջորդի նշված օրենքի նախագիծը:

**Ա.Բախշյանը** խնդրեց 2019թ. մարմնի տարեկան ծրագրում նշված կրթության որակի 5 պարամետրերում ներառել նաև իր կողմից արված առաջարկները՝ գործակից դնել և յուրաքանչյուր դպրոցի համար առանձին գործիքակազմ, դպրոցի որակի գործակից, ինդեքս և սանդղակ:

**Ալ. Շագաֆյանը** օրակարգի այլ հարցերի շրջանակում ներկայացրեց նաև Վայոց ձորի մարզում իրականացված ստուգումների հաշվետվությունը:

**Խորհրդի անդամները միաձայն որոշեցին հաստատել մարմնի 2019 թվականի տարեկան գործունեության ծրագրի համապատասխան լրամշակումներով: (01.01.01)**

ՀՀ կրթության և գիտության նախարար, խորհրդի նախագահ

Ա.Հարությունյան

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ, խորհրդի անդամ

Ա.Բաբայան

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, խորհրդի անդամ

Ա. Ասատրյան

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, խորհրդի անդամ

Ա. Հայրապետյան

«Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ, խորհրդի անդամ

Ս.Ալոյան

«Հանրային դիվանագիտություն» ՀԿ-ի կրթության հարցերով խորհրդական, խորհրդի անդամ

Ա. Բախշյան

«Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն, խորհրդի անդամ

Թ. Ավակյան

ՀՀ ԿԳՆ ԿՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ, խորհրդի քարտուղար

Ա.Գևորգյան